ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1915 Թ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1894—1896 թթ. ջարդերից շատ չանցած հայ ժողովուրդը կանգնեց կատարյալ ֆիզիկական բնաջնջման փաստի առաջ։ Երիտթուրքերի մշակած ծրագրով իրագործվում էր Արևմտյան Հայաստանը հայերից դատարկելու կառավարական օրագիրը։ Ստորև ներկայացվող 14 վաստաթղթերը, որոնք պահվում են Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմության արխիվում (ՀՀ ՊԿՊԱ), 1915 թ. արևմտահայերի բռնի տեղահանության, կոտորածների, ինչպես և առանձին շրջաններում նրանց դիմադրական պայքարի արտացոլման վկայություններ են։ Դրանք տարբեր ծնվելից Ամենայն հայոց կաթողիկոսին հղված նամակներ ու դրություններ են, վերապրածների հուշեր, հիշողություններ։ Փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ։

Մ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ջ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

№ 1

Տեղեկություն Խնուսի մասին

1914—1915 թթ.

Համաեվրոպական աղետալի պատերազմը սկսած էր, երբ Թուրքիա ալ պատերազմ հրատարակեց ընդդեմ համաձայնութեանց, նախօրեակին սկսաւ շուտափույթ զորահանութեան։ Ամիս մը և թերևս ալ աւելի Թուրք ժանդարմաները ինկած Խնուսի գիւղեր զինուոր կը հաւաքէին։

Զուլումն ու կեղեքումը հայերուս համար պատերազմի սկիզբեն որոշուեցաւ։ Տիրող կառավարութիւնը հայ ժողովուրդեն կը պահանջեր զանազան ծանր պահանջներ, որուն խեղճ ժողովուրդը արդէն չկրցաւ տոկալ։ Օսմանեան զինուորական ուժը կազմակերպելու համար հայ շինականի ձին ու ջորին, եղն ու գոմեշը կը գրաւուեր կառավարութեան կողմեն առանց կոպեկ իսկ վճարելու զրաւուած կենդանիներու դներու փոխարեն։

Այսպես օրէօր կառավարութիւնը իր կողոպուտը կը կրկնապատկեր, ասոր լրացուցիչ սկսաւ քրդական ալան թալանը։

1914-ի պատերազմի սկիզբները հայտնի աւազակապետ չխուրցի Մուսա Բեկը իւր հրոսակախումբով երբ Խնուսէն կանցնէր Բասենի ճակատ կռուի երթալու, ասպատակեց հայ գիւղերը և այնպէս անցաւ։ Այս դէպքերուն կառավարութիւնը բոլորովին անտարբեր դիրք բռնած էր։

Խնուսի 26 զուտ հայ գիւղեր, որ 1908-ի սահմանադրութեան շնորհիւ տարուէ տարի նիւթապէս զգալի յառաջադիմութիւն ցոյց կուտային, 914-ի պատերազմի հրատարակուելով օրեօր անկման և աւերումի գնացին։

914-ի դեկտեմբերին, երբ ռուսական բանակը յաղթական քայլերով կը յառաջանար, գրաւելով Պայազետ, Ալաշկերտ ե Տու-Թաղը, Թուրք և քիւրտ գաղթականներու ծայրը տուաւ Խնուսի մէջ։ Կառավարութեան հրամանով գաղթականները տեղաւորուեցան հայ գիւղերու մէջ։ Հայը իր սեփական տուներն դուրս կը հանուեր և Թուրք ու քիւրտ գաղթականները կը տեղաւորուեր։ Եկող գաղթականները կապրէին հայու հացով ու ջուրով։

Թեպէտեւ գաւառիս առաջնորդ Արգար վարդապետ Եօթնեղբայրեան այս բաները կը տեղեկացնէր Կարնոյ առաջնորդարան և Կ. Պոլսոյ պատրիարքարան, սակայն ոչ մի թելադրութիւն կը տրուէր իրեն։

Պատերազմական օրէնքի համաձայն կառավարութիւնը ժողովուրդէն պատերազմական տուրք կը պահանջէր։ Առաջնորդը շրջաբերականով մը

յայտնեց գիւղացիներուն, որ պատերազմական տուրքէն ի զատ իրենք մասնաւոր նուիրատուութիւն ընեն։ Ժողովուրդը իր ունեցած ձմեռուայ պաշարէն (հաւաքաբար նուէրներ կուտային օսմանեան բանակին։ Բայց յամենայն դէպս անօգուտ էր։ Եվ կառավարութիւնը պատերազմական տուրք պատրուակին տակ հայերը ուզածին պէս կը կեղեքէին, զինուորի հացը, հիւանդ վիրաւորեալներու անկողին ե այս կարգի ամէն պէտքեր հայ գիւղերէն կը հաւաքուէին։ Ժողովուրդը առանց խօսքի ամեն ինչ կուտար։ Ձմեռուայ սաստիկ ցուրտին օսմանեան զինուորներուն պաշար հասցնելու համար հայերը շալակով հաց և ռազմանիւթ կը փոխադրէին Խնուսէն Բասեն և այս փոխադրութեան ճանապարհին բուքերու և ցուրտին յաճախ զոհեր կը տրուէին։

915 փետրուարին Պաղտատի արաբական բանակը, որ Մանազկերտ և Տու-թաղ կը բանակատեղէր, տեղափոխուեցաւ Խնուս, այդ ատեն սոսկալի նեղութիւն կը կրեինք ժանդարմներեն։ Միջադէպ մը, որ բնաւ չեմ կրնար մոռնալ, այսպես, երբ այս վերոյիշեալ բանակի ռազմանիւթը Պուլանըգէն Խնուս կը փոխադրուէր, փոխադրութեան ճանապարհ կանցնէր Հարամիկ ե Շապատին գիւղերէն, այս երկու գիւղերու մէջտեղ զանուած զետէն անցած ատեն ջուրը սառած էր։ Եզներու բալխերների [illegible]սրաւանը սառոյցի վրայէն անցած պարագային սառոյցը կը կոտրուի և ռազմանիւթով բեռցուած բալխերը ջուրը կիյնայ։ Այս միջադէպին թուրք ժանդարմաները սաստիկ զայրացած Հարամիկ գիւղը եկան ե մի քանի հայ երիտասարդներ բռնի ուժով տարին ռազմանիւթի սնտուկը ջուրեն դուրս հանելու։ Փետրուարի այդ սաստիկ ցուրտ օրերուն զետին մէջ մտցուցին և ստիպեցին, որ ջուր ինկած սընտուկները փնտրեն ե գտնելով դուրս հանեն։ Այսպես երեք օր յաջորդաբար գիւղէն նոր մարդիկ կը տարուէին սնտուկները փնտրելու և սակայն ցուրտեն և ժանդարմներու ծեծէն բոլորն ալ հիվանդացած ետ կը վերադառնային։ Բազմապիսի տառապանքներով ձմեռը անցուցինք։

915 մարտ ամսու սկիզբները Խնուսի թէ կեդրոնի ե թէ գիւղերու նշանաւոր անձերը ձերբակալուեցան իբր քաղաքական յանցաւոր, բանտարկուեցան ե մի շաբաթ բանտարկութիւնէ յետոյ աքսորուեցան դէպի Կարին և անկէ Կեսարեայ անուան տակ։ Բայց թշուառները Կեսարայ չտեսան...

Մայիսի սկիզբները, երբ ռուսական բանակը յառաջացաւ գրաւելով Պուլանըդը, քիւրտ համիտեների[1] հեծելագունդը սոսկալի պարտութեամբ նահանջեց դէպի Խնուս ե սկսաւ իր սանդարամետական քայլը դէպի հայերս։ Բարբարոս քիւրտերը կառավարութեան թելադրութեամբ ե թոյլտուութեամբ սկսան կոտորել հայ գիւղերը։

915 մայիս 1-էն սկսեալ օրէօր յաջորդաբար գիւղերու վրայ կը յարձակէին, կը կոտորէին ու կը թալանէին։ Մայիս 6-ին հերթը եկաւ մեր գիւղին։ Մեր գիւղը, ուր կային 30—40 տուն թուրքեր, ասոնք լսելով և տեսնելով քիւրտերու բարբարոսութիւնները, բարեկամաբար սկզբի օրը, որ քիւրտեր մեր գիւղի վրայ յարձակեցան, զմեզ պաշտպանեցին։ Յարձակման սկզբի օրը հայ կարգ մը երիտասարդներ որոշ տեղ մը դիրք բռնելով կռուեցան մինչև իրիկուն։ Բայց դժբախտաբար ռազմանիւթը սպառելով իրարմէ զատուեցան և տարբեր միջոցներու դիմեցին ապաստանելու համար։ Խնուսի դաշտը 15—20 օր կոտորած ընելէն յետոյ, կառավարութիւնը արգելեց համիտեներուն, որ այլևս ջարդ չկատարեն, դաշտը մի քիչ սկսաւ խաղաղել։ Մնացորդ թշուառները, որոնք լեռներ ապաստանած էին, քաղցէն նեղուելով և նկատելով, որ ջարդը դադրած է, դաշտը իջան և եկան գիւղերը։ Ժանդարմները, որոնք կառավարութիւն ղրկած էր հայոց գիւղերը պաշտպանութեան համար, հաւաքեցին և ձերբակալեցին մնացորդ այր մարդիկը։ Ձերբակալուածներս տարուեցանք կեդրոնը։ Երբ կեդրոնը կը տարուէինք, ճանապարհներու վրայ փռուած, նեխած դիակները սոսկում և զզրանք կարձակեին։ Ժանտարմաները, որոնք զմեզ կը տանէին Խնուսի կեդրոն, ճանապարհին սոսկալի կը ծեծէին մահուան աստիճան։ Ժանտարմաները հեծեալ էին։ Մեզ առջևնին ձգած անասուններու պէս կը մտրակեն և կստիպեն, որ վազենք։

Մենք վախնալով հև ի հև կը վազենք և իրենք քառասմբակ ձիերնին կը վազեցնեն, մեզ հասնելով՝ ետ մնացողները կսկսին մտրակել։ Վերջապէս երեք ժամուայ ճանապարհը մէկ ժամէն եկանք և երբ հասանք Խնուսի կառավարական շէնքին դուռը, դաւառապետի հրամանով մեզ բանտը տարին։ Բանտի զաղիբ նկուղներու մէջ հարիւաւոր հայեր իրարու վրայ լեցուած կային։ Կուլային ու կողբային այս դժբախտութեանց համար։ Քանի մի օր բանտարկութիւնեն յետոյ մեզ՝ 600 անձերէ բաղկացեալ խումբ մը, աքսորեցին դէպի Կարին։

Եղիշե Յ. Մելիքեան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 85, թթ. 1—3։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 2

Վանի երեսփոխան Վռամյանի հեռագիրը ներքին գործերի նախարար Թալեաթին՝ Թիմարի շրջանի մի շարք հայկական գյուղերի հրկիզման մասին

13 մարտի, 1915 թ.

Կը հաստատեմ մարտ 8 և 11 հեռագիրներս։ Մինչ քանի մը պարկեշտ պաշտօնեաներս ողջամիտ իսլամներու հետ համախորհուրդ կաշխատէինք Թիմարի աղդամիջեան եղբայրասպան հրդեհը հանգցնելու, էդհեմ բեյ կոչուած հին ռէժիմեան ապիկար մը, կուսակալութեան փոխանորդի յայտարարութեան համաձայն, ինքնագլուխ միջամտած է Թիմարի դէպքերուն։ Երեք օր առաջ Աղջավերան հայ գիւղը բարեկամաբար մտնելէ ետք, իր խոստումին վստահացող և մօտը եկող 15 անմեղ հայերը գնդակի կը բռնէ արիւնոտ քմահաճույք մը հագեցնելու համար։ Այդ ոճրագործը նոյնպես ինքնագլուխ, հրկիզել տուած է Բայրակ, Ադնականց, Դոլաշեն հայ գիւղերը։ Ժողովուրդը թալանուած է։ Ժողովուրդին անունով կը պահանջեմ, մարդասպան էդհեմի և իր գործակիցներու պատերազմական ատյանով անմիջապես պատժումը պետութեան կողմէ, հատուցում հրկիզուած գիւղերուն, որոնց վնասը կանցնի 10000 ոսկին և միլիոններու շահատակութեանց վերջ մը դնել իմ փետը. 1. յիշատագրիս կէտերուն համաձայն։

Վանի երեսփոխան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 416, թ. 40։ Պատճեն։ Ձեռագիր։

№ 3

<Աղգային բյուրոյի՝ փոխնախագահի զրույցները Գևորգ Ե կաթողիկոսին՝ Արևմտյան Հայաստանում սկսված ջարդերի և ԱՄՆ-ի ու Իտալիայի կառավարությունների ղեկավարներին դիմելու մասին>

4 ապրիլի, 1915 թ.
Թիֆլիս

Վեհափառ տեր,
Երեկ Տփխիսում ստացվեց հետևյալ հեռագիրը Սոֆիայից (Բուլգարիա).

„Massacres systématiques Erzeroum, Terdjan, Zeïtoun, atentours. Rencontres sanglantes Bitlis, Van, Mouche. Revolte Cilicie. Violation, pillages, assassinats Eguina et Arménie Mineure. Extremination économique

toute population, Irade imperiale désarmant tous soldats armeniens. „Azatamart" suspendu, un redacteur exclu Angora. Protestez auprès gouvernemeuts neutres pour empecher massacre général".

«Սիստեմատիկ կոտորածներ էրզրում, Դերջան, Զեյթուն ու շրջակաները։ Արյունահեղ ընդհարումներ Բաղեշ, Վան, Մուշ։ Ապստամբություն Կիլիկիա։ Բռնություններ, թալան, սպանություններ Ակն ու Փոքր Հայք»։

Տնտեսական ավերում ամբողջ ազգաբնակության։ «Ազատամարտը»[3] դադարեցրած, խմբագիրներից մեկը աքսորված Անկորա։ Բողոքեցեք չեզոք պետությունների առաջ ընդհանուր կոտորածն արգելելու համար»։

Հեռագիրը ձեռքից ձեռք անցնելով, բուռն հուզում առաջ բերեց հասարակության մեջ ու Ազգային բյուրոն պարտք համարեց անմիջապես դիմել Կովկասի փոխարքային երկու նպատակով. ա) տեղեկանալու, թե ո՞ր աստիճան ստույգ է հեռագրի հաղորդածը, բ) իմանալու, թե ի՞նչ օրինական միջոցների կարելի է դիմել կոտորածի առաջն առնելու համար։

Պարզվեց, որ հեռագրի հաղորդած սոսկալի լուրը, դժբախտաբար, միանգամայն ճիշտ է։ Ինչ վերաբերվում է երկրորդ հարցին, կոմս փոխարքայի կարծիքն այն է, որ Դուք, Վեհափառ տեր, իբրև միակ ներկայացուցիչ ու հոգատար ամբողջ հայ ազգի, հաճիք արտաքին գործոց նախարար պ. Սազոնովի[4] միջոցով գիմում անել Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ պ. Վիլսոնին և Ն. Մ. Իտալիայի Վիկտոր-Էմանուել թագավորին, որպեսզի նրանք և իրանց կառավարությունները՝ հանուն մարդկության ու քրիստոնեության՝ անհապաղ ու կտրուկ ճնշում գործ դնեն Պոլսում արդեն սկսված մեծ աղետին վերջ դնելու և գալիք թերևս ավելի մեծ աղետների առաջն առնելու համար։

Ապա կոմս փոխարքան հայտնեց, որ ինքը հեռագրով տեղեկացրել է արդեն պ. Սազոնովին Թուրքահայաստանում կատարվող անցքերի մասին և ավելացրեց, որ եթե Դուք, Վեհափառ տեր, պատշաճ համարեք անել վերոհիշյալ դիմումը, փոխարքան իր կողմից կմիջնորդե, որ Ձեր դիմումին անարգել ու բարեհաջող ընթացք տրվի։

Ձեկուցանելով Ձերդ Վեհափառությանը, այս ամենը, Ազգային բյուրոն հուսով է, որ Ձեր հեղինակավոր ձայնը անլսելի չի մնա և որ երկու մեծ պետությունների՝ Ամերիկայի ու Իտալիայի միջնորդությունը, եթե ոչ բոլորովին, ապա մասամբ կզսպե այն ոճրագործ ձեռը, որ այսօր կրկին ու կրկին ներկվում է մեր հարազատների անմեղ արյունով։

Ձերդ Վեհափառության ամենախոնարհ որդի, փոխնախագահ բյուրոյի՝

Հ. Խունունց

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 28, թթ. 156—157։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 4

<Телеграмма Католикоса Всех Армян Геворга V наместнику на Кавказе И. И. Воронцову-Дашкову[5] о резне ванских армян>

14 апреля, 1915 г. с. Эчмиадзин

От Азербайджанского епархиального начальника из Маку получил следующую телеграмму: «Сегодня прибыли в монастырь св. Фадея[6] сто шестьдесят армян из Вана, Беркри, Абагн, избежав резни, поголовная резня всех армян начата восьмого апреля. Десять тысяч вооруженных армян десятого апреля беспрерывно ведут войну с турками, курдами. Необходима скорая помощь. Прошу ходатайства перед наместником скором наступлении Ван». Почтительно прошу Вашего авторитетного ходатайства перед высшим правительством о спасе-

нии мирного обезоруженного христианского населения и немедленной помощи самозащитникам.

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, ղ. 26, թ. 39։ Բոզնված օրինակ։ Մեքենագիր։

№ 5

<Անհայտ հեղինակի օրագրությունից՝ Շատախի ինքնապաշտպանության մասին>

15 ապրիլի, 1915 թ.
Շատախ

...Շատախի կառավարությունը նենգությամբ իր քով կանչելով կը բանտարկէ մեր ընկեր Յովսեփ Զօլօեանը՝ Շատախի կազմակերպությունը այդ առթիւ կը պահանջէ, որ ձերբակալուած անմեղ ընկեր ազատ արձակուի, կառավարությունը թե հոս ե թե Շատախի խօսք կուտայ երեք օրէն արձակել, բայց դեռ երեք օրը չլմնցած ոստիկանությունը թաղի հայոց շուկան բռնելով կսկսի հրացանաձգություն։ Հայերը կը պարտաւորուին դիմել ինքնապաշտպանության։ Թաղի կռիւներուն մեջ կըսպանուին 15 թուրքեր, իսկ հայերեն մի հալ մը և կին մը միայն։ Ընդհարումները կարձագանքուին նաև Սևակին գիւղի մեջ։ Հոն մեր ընկերները կը ձերբակալեն 22 թուրք ժանտարմներ, որոնցմէ երկուքը իրենց ընդիմության պատճառով կսպանուին, իսկ քսանն ալ զինաթափ ըլլալով՝ ազատ կարձակուին։

15 օրուան բուռն պայքարներուն մեջ մեր ընկերները լիակատար յաջողության մեջ են, գրաւած են 4 քիւրդ գիւղեր և 70-ի չափ զենքեր։

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 3։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 6

<Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանի գրությունը Եվրոպայի հայոց առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Թութուջյանին՝ Արևմտյան Հայաստանում հայերի կոտորածների և Հայոց Դատի լուծման համար եվրոպական երկրներին դիմելու մասին>

Թիվ 706

20 ապրիլի, 1915 թ.
ս. Էջմիածին

Նորից Տաճկահայաստանում հարյուրավոր անմեղ հայերի արյունն է հոսում։ Տաճկաց տմարդի կառավարությունն այժմյան քաղաքական պայմաններում իրեն միանգամայն ազատ համարելով ամենայն տեսակ պատասխանատվությունից, քաղաքակիրթ աշխարհի, հատկապես Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի վերահսկողությունից և միջազգային պարտավորություններից, սկսել է իրագործել յուր սոսկալի ծրագիրը՝ քրդական ավազակախմբերի ու բաշիբոզուկ պաշտոնյաների ձեռքով հայաշատ վիլայեթներում կազմակերպել կոտորածներ։ Հաստատ աղբյուրից տեղեկություն ստացվեց, որ տաճիկ կառավարության դավադիր պաշտոնյաները իրենց հատուկ խաբեությամբ հավաքել են բազմաթիվ գյուղերից խաղաղ ու անզեն հայ գյուղացիներին զինվորակոչի պատրվակով և գնդակահարել ու կոտորել են հազարավորներին։ Վանի վիլայեթից մեծ դժվարությամբ ու նեղությամբ ազատվող ականատեսները պատմեցին Մայր Աթոռում։ Ազգիս Վեհափառ Հայրապետը նախապես արտասահմանյան հեռագիրներից և այլ հաստատուն աղբյուրներից տեղեկացած լինելով, ապրիլի 7-ին հեռագիրներով անմիջապես դիմեց չեզոք պետություններին, Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին, Իտալիայի թագավոր Վիկտոր-Էմանուելին, նույնպես և ռուսաց

արտաքին գործոց նախարար Սերգեյ Դմիտրիևիչ Սազոնովին, որը լավ է տրամադրված դեպի հայ ազգը, Անգլիայի թագավորին և Ֆրանսիայի նախագահին, որպեսզի եռապետական համաձայնությունն ևս, որ պաշտպանել է տաճկահայոց հարցը և հաջողացրել է 1914 թ. հունվար 26-ի Տաճկահայաստանի բարենորոգության ծրագիրը, այժմյան ծանր ու պատմական րոպեին ևս ցույց տա յուր պաշտպանությունը հայ ազգին իր դեսպանների միջոցով չեզոք պետությանը վրա ազդելով, առաջն առնելու Տաճկահայաստանում կատարվող անգթություններին, սիստեմատիկ կոտորածի և կազմակերպված թուրք-քրդական ավերումների։

Նորին ս. օծությունը հույս ունի, որ եռապետական համաձայնությունը գործ կդնի ամենայն հնարավոր միջոցներ՝ փրկելու մի քրիստոնյա ժողովուրդ, որը գիտե գնահատել յուր բարերարներին։ Եվ այսօր ամենայն տեղ հայերն արտակարգ ոգևորությամբ և անձնվիրությամբ են վերաբերվում դեպի Ռուսաստանը, Ֆրանսիան ու Անգլիան, չխնայելով ոչ իրենց կարողությունը և ոչ իրենց կյանքը՝ արդարության, հաղթանակի ու ազգերի իրավանց պաշտպանության համար ընդդեմ թուրք-գերմանական բռնության։

Վեհափառ Հայրապետը մխիթարվում է և գոհ է, որ ազգային կյանքի այս ծանր ճգնաժամին ամենայն հայ համայնքները, կազմակերպված հանձնաժողովները՝ գդալով և ըմբռնելով իրենց ազգային հասարակական պարտականությունները, լրջորեն գործում և կանոնավոր դիմումներ են անում Եվրոպայի ու Ամերիկայի պետական ու քաղաքական գործիչներին՝ պաշտպանելու Տաճկահայաստանի հայ ժողովուրդը տաճկական մոլեռանդությունից և քրդական խժդժություններից՝ եվրոպական և ամերիկական մամուլի և հասարակական կարծիքի ուժեղ արտահայտությամբ և չեզոք պետությանց դեսպանների զորեղ միջամտությամբ։

Բնական է, այս ուղղությամբ գործելը կարող է շատ դժբախտությանց առաջն առնել և Եվրոպայի հասարակական կարծիքը նախապատրաստել հօգուտ տաճկահայոց, մինչև որ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան միտդյալ ուժերով վերջնական հարված և օրինակելի պատիժ կտան անմետ տաճիկ կառավարության, որպիսի արդարադատ գործի հաջողության համար հայ ազգն ևս չի խնայում ոչինչ ըստ յուր կարեաց։

Վեհափառ Հայրապետը հույս ունի, որ եռապետական համաձայնությունը՝ Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան վերջնականապես կտոատեն հայերին, տաճիկ բռնակալ լուծին և կտան հաղարավոր հայ նահատակների արյունով ողողված Հայաստանին ինքնավարություն, որով հայ ժողովուրդը բարավոր սոսկալի տանջանքներից հետո հանդիստ նստնի և ենվիրվի ազգային քաղաքակրթական վերածնման ոլորտին։ Թիվ 707 Լոնդոնի հայոց միաբյալ ընտերության նույն մտքով թ. 708. Փարիզի հայոց եկեղեցվոյ ավագ քահանա բարձրապատիվ տ. Վռամշապուհին և հայոց հանձնաժողովին

Թ. 709 Բուլղարիայի առաջնորդ գերապատիվ տ. Պետրոս եպիսկոպոսին և հայոց հիերարքներ- և թաղական հոգաբարձություններին

Նույնը միայն ավելացնել. «Բուլղարիան թվումն է նաև Բուլղարիան, որ լավ է տրամադրված եղել մեզ դեպի հայերը։ Ձեր և ժողովուրդի նեղկայացուցիչների դիմումը տեղին է և օգտակար»։

Թ. 710. Ամերիկայի հայոց առաջնորդ գերապատիվ տ. Զավեն վարդապետին և ազգային կենտրոնական վարչության ու ազգային պաշտպանության հանձնաժողովին

Նույնը։

Ծանոթ. Գրվեց այս ձևով, որպեսզի դիմում անեն Բուլղարիային և այլ պետությանց, եթե մինչև այժմ չեն դիմել։

20 ապրիլի 1915 թ.
ս. Էջմիածին

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, թթ. 102—103։ Թողնված օրինակ։ Ձեռագիր։

№ 7

<Բուլղարահայ թեմական առաջնորդի գրությունը Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ին՝ Արևմտյան Հայաստանում կոտորածի չափերի մասին>

Թիվ 295

12 օգոստոսի, 1915 թ.
Ֆիլիպե

Վեհափառ սրբազան Հայրապետ,

Կը հաստատեմք մեր հղած անցեալ ամսոյ 9 թուակիր և 250 թուահամար գրութիւնն ե ներփակեալ տեղեկագիրն։

Մեր այս երրորդ տեղեկագրով ամենադժբախտ պարտականութիւնն է, որ կստանձնեմք հաղորդելու Ձերդ Վեհափառութեան, Հայաստանի կործանումը։ Այլեւս ոչ մեկ հայ չէ մնացած Հայաստանի որևէ մէկ անկիւնը, ամէն կողմ աւերուած, քանդուած ու կործանուած է։ Ներփակեալ պոլսական աղբիւրէ մեր ստացած գրութեան պատճէնը արցունքով Ձերդ Վեհափառութեան կհղեմք։ Ամենէն քար սիրտն անգամ չկրնար տոկալ ի տես թրքական վայրագութեանց, պատմութիւնը երբեք արձանագրած չէ այսպիսի գազանութիւններ։

Որպեսզի կարենաք, Ձերդ վեհափառութիւն, պատկերացնել մեր ամբողջական կորուստը, աստ կը դնեմք ղանգուածային տեղահանութեան հետեւանք Հայաստանի, ինչպէս և Փոքր Ասիոյ այլեւայլ գաւառներու մէջ սպաննուածներու, անհետացածներու, իսլամացածներու, առեւանդուածներու թիւը։

Հալէպ	15,800	
Սիս	9,500	
Հաճըն	20,800	
Զէյթուն	21,000	
Ֆոնուզ	7,000	
Տիվրիկ	11,300	
Բաղեշ-Մուշ	51,500	
Նիկոմեդիա	65,000	
Արմաշ	5,000	
Պրուսա	25,000	
Պանգրմա	15,000	
Կեսարիա	40,000	
Սեբաստիա	81,000	
Եւդոկիա	23,000	
Ամասիա	25,000	
Շապին Գարահիսար	25,200	
Սամսուն	20,000	
Տրապիզոն	32,700	
Էրզրում	75,000	
Երզնկա	25,500	
Բաբերդ	17,000	
Բասէն	10,500	հոգի
Դերջան	15,000	
Քեմախ	10,000	
Խարբերդ	45,000	
Քղի	24,000	
Սղերդ	25,000	
Տիգրանակերտ	55,100	
Ակն	10,200	

Արաբկիր	19,500
Ջմշկածագ	9,000
Համագումար	835,600

Այս համատարած կորստեան թիւը ահռելի և սոսկալի թիւ մըն է։ Արտասահմանի հայութիւնը բոլորովին շուարած այս կորստեան հանդէպ, ամէն միջոցներու կ'դիմէ իր դժբախտ հայրենակիցներուն օգնութեան հասնելու համար։ Այս օրուան թուականաւ իսկ պուլկար արքայական կառավարութեան մատուցինք յիշատակագիր մը և նկարագրեցինք ղանդուածային տեղահանութեան, կոտորածներու, առևանգումներու սովամահերու և կրոնափոխութեան մանրամասնութիւնները, խնդրելով, որ իր ազատարարի ձեռքը երկարէ փրկելու համար գէթ Պոլսոյ և մէկ քանի գաւառներու մէջ մնացած հայութեան բեկորները։

Շնորհապարտ պիտի ըլլայինք, Վեհափառ Տէր, եթե եւրոպական պետութեանց մօտ Ձեր Վեհափառութեան դիմումներուն արդիւնքը, բարեհաճութիւն ունենայինք հաղորդել տալ մեզ, ի մխիթարութիւն արտասահմանի հայոց։

Մատչելով ի համբոյր ա(սավ)ածարեալ սրբոյ աջոյդ պատուական։

Մնամ ամենախոնարհ հոգևոր որդի, Ձեր ընտրեալ առաջնորդ

պուլկարահայոց՝ Ղեոնդ եպ. Դուրեան

22 ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 96, թթ. 37—38, 47—48։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 8

<Վարդան քահանա Վարդերեսյանի՝ Գևորգ Ե. կաթողիկոսին ուղղված նամակից, մուսալեռցիների ինքնապաշտպանության մասին>

9 Նոյեմբերի, 1915 թ.
Պորտ Սաիդ

Վեհ(ափառ) սրբ(ազան) հայր

Ինչ գրելիքս չեմ գիտնար, արդի հայկական ճգնաժամային օրերու մեջ հայուն տագնապը, հայուն ցավը և կրած հալածանքը աննկարագրելի է ամենուրեք։ Մենք ալ այդ դժբաղդութեան ենթարկվեցանք, և բաղդը այսօր Եգիպտոսի Նեղոսի ափունքը բերած է մեզ։ Համառօտաբար նկարագրեմ աստանոր, ինչ որ պատահեցաւ մեր վրայ։

Երբ համաշխարհային պատերազմը սկսեց, Թիւրքիա ալ իր պատերազմական վիճակը հրատարակեց ու զինուորները հաւաքեց։ Նախապէս մեզ՝ հայոցս զէնք ալ տուաւ և ատեն մը յետոյ հայերը անզէն թողուց և բեռնակիր (համալ) կամ բանուոր (ամէլէ) նկատեց զիրենք։ Քիչ յետոյ սկսաւ հայերուս վրայ կասկածիլ՝ անշուշտ գերման թելադրութեամբ (անիծեալ ըլլայ այդ ահարկու գազանը՝ Գերմանիան) և տուներ խուզարկեց, աքսորեց, կախաղան բարձրացուց։

Սատանի միտքը անգամ չեկած չարիքներ հասուց մեր գլխուն և մերջիվերջոյ տեղահանութեան ձեռնարկեց։ Ոմանց դիրքը, վայրը, ապաստամբելու անհարմար նկատուելուն ակամայ կամօ ստիպուեցան հնազանդիլ, սակայն ճամբան հազարումեկ տանջանքներով կոդոպտուեցան, անպատուեցան ու սպանուեցան։ Որ մեկը յիշեմք և չը տոչորիմք։ Անտարակոյս հայուն այս վիճակը յայտնի է Վեհ(ափառ) հայրութեանդ, որովհետև Կովկասի կողմն ալ մեզ նման փախստականներ կան, որոնք մեզմէ շատ առաջ Թրքահայոցս խիստ ցաւալի վիճակը նկարագրած են...

Այդ ահարկու գազանը՝ Թուրքիան սմեն չարիք մեր վրայ աւ հասցնելեն յետոյ տեղահանութեան համար ալ շրջաբերականներ ղրեց, որպեսզի թողունք մեր բնակավայրը և կառավարութեան հարմար նկատած մեկ վայրը

երթանք։ Այո, հոն, ուր մահը մեզ համար յօրինուած է արդեն։ Մենք՝ Անտիոք—Սուէյտիայի հայ գիւղերս, որոնք են Հաճի-Հապիպլի 300 տնուոր, Պիթիաս՝ 250, Եօղուն-Օլուգ՝ 280, Խտրպէկ՝ 200, Վագրֆ՝ 130, Քէպուսիյէ՝ 250 տնուոր, այդ հրամանին չուզեցինք հնազանդիլ, ապստամբելով մեծամասնաբար լեռ բարձրացանք։ Ատոր վրայ անունը աշխարհիս երեսին ջընջուելիք թիւրքը իր կանոնաւոր զինուորներով և պաշը պոզուգներով՝ մեր վրայ յարձակեցաւ։ Երկնային զորութեամբ և մեր երիտասարդներուն շնորհիւ ետ մղուեցան միշտ, բազմաթիւ կորուստ տալով իրենց։ 50 օրուան չափ լեռ մնացինք և այդ միջոցին մեզմէ միայն 15 հոգի նահատակուեցան, մինչդեռ թշնամուն կողմէ 2—3 հարյուր շուներ սատակեցան։ 3—4000-ով մեր վրայ կը յարձակուէին...

Լեռը, որ Մովսէսի լեռ կը կոչուի, բոլորովին մեզ՝ հայոց կը պատկանի, որուն արեմտեան կողմը Միջերկրականի մի եզրն է։ 50-ական օրեր յետոյ ֆռանսական մարտանաւ մը նշմարուեցաւ։ Մեր պարզած կարմիր խաչ դրօշնիս տեսաւ և ծովափ մօտենալով մեզ հետ յարաբերութեան մէջ մտաւ և վիճակնիս հասկրցաւ։ Խոստացաւ 8 օրէն մեզի ապահով երկիր մը տանիլ։ Այդ 8 օրուայ միջոցին երկու սաստիկ ընդհարումներ ևս ունեցանք թշնամիին հետ։ Աստուծոյ զօրութեամբ այս անդամ ալ յաղթեցինք։

Երբ 8 օրը լրացաւ, պատրաստ էին ֆռանսական 5 հսկայ մարտանաւեր, որոնք պահապան հրեշտակի նման եկան և փոխադրեցին զմեզ՝ ի Բորթ-Սաիտ, եգիպտական երկիր, Նեզոսի ափունքը։ Ամենայնիւ գոհ ենք մեր վիճակէն, կը գտնուինք վրաններու տակ, իբր 5000 հոգինոց բանակ մը կազմած ենք։ Անգլիական կառավարութիւնը կը հոգայ մեր ուտեստը, իսկ եգիպտահայոց կողմէ զգեստ կը հոգացվի։

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, դ. 5, գ. 108, թթ. 4, 7։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 9

<Վ. Ույլերի հուշերից մի հատված՝ 1915 թ. Ատաբազարի տեղահանության մասին>

1915 թ.

Հուլիս 20, երեքշաբթի։ Առավոտուն շատ կանուխ ամբողջ հայ թաղերը սուինաւոր ոստիկաններով պաշարուեցան։ Ատաբազարի հայութեան թիւն է 20000։

Ամբողջ արու հայերը՝ 12 տարեկանէն ըսկսեալ մինչև 80 տարեկան ծերունին՝ հայոց ս. Կարապետ եկեղեցի հաւաքեցին, նախ մունետիկ կանչելով, թե Իպրահիմ պեյ հայերուն հատուկ բանախօսութիւն մը պիտի ընէ։ Այդ միջոցին եկեղեցիին զանգակն ալ զարհուրցաւ, և հայ ժողովուրդէն մեծ մասը մը գնաց եկեղեցի, տխուր նախազգացումի մը շատերը կերևային, սակայն գտցողներուն դեմքին վրա, ասոնք հոն մնացին նոյն գիշերը և ղղացող անհատները իմացան, թե գազանացած Իպրահիմը ծեծելով զենքեր կը պահանջէ հայերէն։ Դուրսը մնացած ժողովուրդը բնականաբար չուզեց երթալ հոն, երբ հետևյալ առաւօտ կրեին զանգակներով եկեղեցի չգացող ժողովուրդը հրավիրեցին, որպեսզի անպատճառ երթան։ Ոստիկաններն ալ 'ործի ըսկսան և բոլոր արուները բռնելով եկեղեցի տարին, այսպես գործեցին երեք օր և երեք օր վերջ գրեթե այր մարդ չմնաց Ատաբազարի հայերուն մեջ, կիներ, ծերեր ու պզտիկներ սարսափահար եղած կուլային կողբային իրենց սիրելիներուն համար։ Սբ. Կարապետ եկեղեցին կատարեալ ուխտատեղի մը եղած էր խեղճ կիներուն և մանուկներուն համար, որոնք ամեն օր և օրը երկու անգամ կերթային հոն իրենց սիրելիին կերակուր տանելու կամ գեթ երեսը տեսնելուն համար։ Թշվառ կիները ահաբեկված ետ կը դառնային իրենց անտեր տունները ճամբուն միշտ հանդիպելով հաստ փայտերու

խուրցին՝ որ ամեն առաւօտ թարմ կը տարուէր՝ իրիկունը կոտրելու պայմանավ իրենց թշուառ սիրելիներուն մարմիններուն վրայ, ոմանց աչքը պատռած էր, ոմանց ոտքերը բզկտուած և շատեր մարած կամ անկիւնը ինկած կը հեւային, 3—4000 հայեր կը ծեծէին եկեղեցիին սալաքարներուն վրայ...։ Տասներորդ իրիկունը եկեղեցիին դուռները բացուեցան և գազանին ձայնը լսուեցաւ կրկին. «գացեք հիմա հերիֆներն, ինչ զենք որ ունիք բերեք, ալ չպիտի ծեծուէին, չպիտի աքսորուէին»։ Երեք օրը վերջ՝ կիրակի առաւօտ զենքերը յանձնուած հետևյալ օրը՝ կանուխ շատ խիստ կերպով պաշարուեցան հայոց խաղերը, և մունետիկը ըսկսաւ կանչել, թե ամեն հայ երեք օրուան մեջ անպատճառ դուրս պիտի ելլե քաղաքէն և ոչ մեկը պիտի մնայ պզտիկ թե մեծ։ Պետք է գիտենալ, թե Իպրահիմի այս գազանային արարքները տեղի կունենային խորհրդակցութեամբ՝ Ատաբազարի իթթիհատի ներկայացուցիչ Համիտի, նույն ատենուան դայմագամ Նէճարիի և իրենց արբանեակներուն նաև տեղւոյն թուրք էշրեֆին հաւանութիւնովը։

Թշուառ ատաբազարցի աքսորյալները առանց իրենց մտքի արթնութիւնը կորսնցնելու, քաջութեամբ տոկալով ամեն տեսակ գժուարութիւններ, ճամբայ ելան դեպի Ատաբազարի մոտակայ կայարանը Արիֆիե, ծեծին պատճառած ուռուցքներով, ոմանց ալ զլուխը պատռած, օրերով մնացին Արիֆիե, բաց օդին մեջ՝ ուր որ քիչ մահեր չպատահեցան...

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 397, ց. 1, գ. 62, թթ. 1—3։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 10

<Письмо начальнику морского ген. штаба об оказании помощи армянам, выселенным в районе Германской железной дороги Алепо-Мосул>

1915 г.

1. М. С. Аджемов, А. Б. Асрибеков, П. О. Гукасов и М. Й. Пападжанов 7-го ноября 1915 г. просили об оказании помощи тем 500.000 армянам, которые выселены в район Германской железной дороги Алепо-Мосул и дальше к Багдаду, следующим образом:

Разрешить представить на временное хранение в министерство собираемые армянским обществом с этой целью деньги; снестись с нашим послом в Вашингтон, чтобы он просил Американское правительство поручить Американскому послу в Константинополе—г. Моргентау принять (через Американского посла в Петрограде) указанные деньги и предоставить их в распоряжение Константинопольского армянского патриарха и Сисского католикоса, а если это опасно (если Турецкое правительство может отобрать деньги), то оказать помощь армянам (в том числе и константинопольцам) по соглашению с названными владыками.

2. Принять нашему правительству инициативу, пока конфиденциально в деле помощи указанным армянам, ассигновав известную сумму (хотя бы 500.000 руб.) и пригласить к тому же союзников наших, что положит основание дальнейшей деятельности в нейтральных странах (в Швеции, Швейцарии, главным образом, в Америке). Американский посол в Петрограде высказал уверенность в готовности его правительства помочь армянам, если представители американских армян (викарий) обратятся к Вильсону. По газетным сведениям в Америке имеются пожертвования в несколько миллионов рублей. Вопрос не в деньгах, а в инициативе нашего правительства, могущей служить еще раз поддержкой русской ориентации армян.

3. Содействовать избранным армянским общественным деятелям, выехав на места, образовать, по соглашению с нашими послами, «армянские комитеты», через которые может действовать наше правительство и союзники.

4. Разрешить для телеграфного сношения с американскими армянами пользоваться помощью Министерства иностранных дел (шифр) и содействием нашего посла.

Деятельность за границей и сношения относятся на счет армян.

ՀԱ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 100, թթ. 3—4։ Պատճեն։ Մեքենագիր։

№ 11

<Ականատես Թորոս Սիմոնյանի հուշերը՝ Զելիեզուզան գյուղի բնակչության ինքնապաշտպանության մասին>

16 օգոստոսի, 1916 թ.
Կողբ

Զելիեզուզան ուներ 247 տուն և 2035 բնակիչ, 4 եկեղեցի, 12 ջրաղաց, 3 դպրոց, 13550 ոչխար, 2932 տավար։ Եկեղեցիներու մեջ կային երեք ձեռագիր ավետարաններ։ Գյուղի տարեկան ամբողջ եկամուտն էր 220 օսմ[անյան] լիրայի հացահատիկ (2735 չափ), 600—700 բարդ խոտ։ (1)914 թ. օգոստոսին կառավարությունն Զելիեզուզանեն 20—50 տարեկան տղամարդիկ զինվորության կանչեց, բայց զելիեզուզանցիք պատասխանեցին, թե քանի որ մենք չորս կողմեն աշիրեթներով շրջապատված ենք և ամեն րոպեին անոնց հարձակման սպառնալիքի տակ, չենք կրնար զինվոր տալ, եթե աշիրեթներեն ալ զինվոր չվերցնենք։ Ասոր վրա անցավ մի քանի ամիս, երբ երեք ոստիկաններ խիանցի քուրդերե սպանվեցան։ Կառավարությունն այդ ոստիկաններու սպանությունը վերագրեց զելիեզուզանցիներուն և 9 նշանավոր մարդիկ բռնելով, տարավ վեցը կախեց և երեքը բանտարկեց։ Այդ կախվածներն էին Ղազար Հովհաննիսյան, Հաբեթ Կիրակոսյան, Սահակ Դոնեյան, Ղազար Արեյան, Եզո Պողոսյան, Հովհաննես Պողոսյան, իսկ բանտարկվածներն էին Խաչո Մքոյան, Արո Մքոյան և Ադամ Գորկեյան։ Այդ վեց անմեղ անձերու կախումը միանգամայն չքացուց կառավարության վրա եղած վստահությունը, և զելիեզուզանցիք զորք չտվին։

(1)914 թ. հունիսին 4000 կառավարական զորք և 6000 ալ աշիրեթ՝ ղեկավարությամբ քոռ Սլեման աղայի (խիանցի), Հուսեին աղայի (ղուլպցի), հաջի Ռաշիդ աղայի (ֆարխնցի), Սագդ բեկի (ֆարխնցի), Խարժի բեկի (հազրովցի), հաջի Մահմադի (բաղկանցի), Սլեման աղայի (ալմանցի), Գենջո Փափուրի (մուսիցի), Ուռֆե Հապեի (շեկոտանցի), Սալիմե Հավեի (բխարցի) և Մուսա Խասբմ բեկի (խութեցի) հարձակեցան Զելիեզուզանի և Անտոքի վրա։ Սասունի մյուս գյուղերե ժողովուրդներն և զինված տղամարդիկն ալ հավաքված լինելով Անտոք և Զելիեզուզան, մի ամսվան չափ ուժեղ դիմադրություն եղավ և խուժան չկարողացավ ոչինչ ընել։ Այնպես որ, այդ մի ամսվա կռվին մեջ միայն 7 անձ հայերեն սպանվեցան։ Իսկ երբ ռուսական զորքը ետ նահանջեց (հուլիսին), թուրք կառավարությունը 12000 զորք և 15000 քուրդ խուժան օգնության ղրկեց Անտոք և Զելիեզուզան պաշարող խուժանին (4 թնդանոթով և 2 գնդացիրով) և 21 օր անդադար ռմբակոծելով Անտոքի դիրքերը՝ գրավեց և կոտորեց հոն ապաստանած 20—25 հազար ժողովուրդը։ Հայ մարտիկների մեկ մասը փախավ ուրիշ լեռներ և անտառներ, ուր մասնակի կռիվները շարունակվեցան։ Կառավարություն տեսնելով, որ զենքի ուժով չի կրնար բոլոր սասունցիները մեջտեղեն վերցնել, հայտարարու-

թյուն մը բաց թողուց, որով ներում կըխոստանար անձնատուր եղողներուն։ Այսպիսով լեռները ապաստանած ժողովուրդը եկավ Դափիկ գյուղ, անձնատուր եղավ գավառապետին։ Գավառապետ զանոնք բոլորը ղրկեց Մուշ, ուր երեխաներ և կիներ թափեցին Եփրատ գետ, իսկ տղամարդիկ ղրկեց Բիթլիս և իրար կապելով գնդակահարեց։ 150 մարդ ալ Մուշ մնացածներեն փախան նորեն լեռները։

Գելիեգուզանեն աղատված են ընդամենը 250 անձ։

Հավաքեց Գ. Մ. Ներկարարյան

Ծանոթ(ություն) Վերոհիշյալ ղեկավար նշանավոր ոճրագործներեն զատ նշանավոր ոճրագործներ էին նաև Մհեի Ամար (խիանցի), Սլեման Մալահանին (խիանցի), հաջի Շաոո (բազրանցի), Սլո Բրահիմ (հարկորցի), բողկցի Թելո Խշմանյան։

Հավաքեց Գ. Մ. Ներկարարյան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 439, թ. 1։ Պատճեն։ Ձեռագիր։

№ 12

<Արսեն Խաչիկյանի «Դրոնբենական ցարդր Խարբերդին մեջ» նուշերը՝ Խարբերդի հայության կոտորածի մասին>

28 Նոյեմբերի, 1916 թ.

Ծրագրուած, այո տարիներ առաջ ծրագրուած հայաջինջ քաղաքականութիւնը դրութենական կերպով գործադրուեցաւ Խարբերդին մեջ ինչպես նաև Հայաստանի բոլոր նահանգներու մեջ Մոնկոլին յատուկ աներևակայելի խրժգրժութիւններով, եղեռներով և նախջիրներով խառն ահավասիկ եղանակները, որք գործածուեցան Խարբերդին մեջ ջնջելու անմեղ հայերը՝ իրենց բոլոր պարագաներով, խլելով անոնցմե ինչք և պատիւ, կեանք և երջանկութիւն, կրօնքը և լեզուն...։

Առաջին քայլը տեղի ունեցաւ կրթական հաստատութիւնները քանդելու և փճացնելու մեջ. գոցելով ազգային բոլոր դպրոցները, ինչպես նաև Ամերիկեանը, Եփրատ գոլեճը թե տղոցը և թե աղջկանցը։ Գոլեճները, վարժարաններ ամենքն ալ գոցելու հրաման ըրավ կառավարութիւնը՝ առարկելով «համաճարակ հիվանդութիւնք կան» փուճ և սնոտի փաստաբանութիւն, ցրուել տուաւ բոլոր աշակերտութիւնը՝ շենքերը վերածելով հիւանդանոցներու և զօրանոցներու։ Դպրոցներու փակուելը և այլն տեղի ունեցաւ 1915 մարտի 28-ին, վարիչ մարմինները, Ամերիկեանն միսիոնարութիւնը կրկնակի դիմումներ ըրին, սակայն արդիւնքը բոլորովին պարապ, լսող չեղավ։ Ապրիլին տեղի ունեցաւ կարգ մը տուներու խուզարկութիւնք ամբաստանուելով իբրև կուսակցականներ, սկսան փնտրել գրութիւնք և այդ առթիւ ձերբակալել ականաւոր անձինք։ Բայց այս առթիւ ծեծ, չարչարանք և այլն չկար, եղածը բանտարկութիւններ էր սոսկ։ Մայիս 1-ին սկսան ձերբակալել փրոֆեսորները. Եփրատ գոլեճեն կրթական հաստատութեանդ պատկանող անհատներ, հարուստներ և նշանաւոր գրողներ. վարդապետներ և քահանաներ, որոնք որ նախապես աչքի զարնուած էին։ Մայիս 10-են սկսաւ ծեծ, չարչարանք հետևեալ կերպերով։ Նախ սկսան ծեծել, յետոյ ծեծուողները պայտել, բևեռել գլուխները մեքենայից մեջտեղ դընել և ճզմել, վերջին կերպը չարաչար կերպով գործադրուեցաւ Եփրատ գոլեճի փրոֆեսորներու և ուրիշ նշանաւոր հայ մտաւորականներու վրայ, չմոռնամ ըսել թե աքցաններով սկսան նաև ոմանց եղունգները և մատները քակել, ձեռքերուն մեջտեղ քեզապ սոլի լեցնել վառել և տանջանքները այսպես կրկնապատկել։ Տառապանքի այս շրջանին, որ ատեն ժողովուրդը ծայր աստիճան սկսած էր յուսահատել աներեակայելիորեն, անգութ կառավարութիւնը Մաքիավելական խաղի մը սկսաւ, «հե-

ոազիր ունինք, չեզոքները պիտի արձակինք իսկ կուսակցականները պիտի թեթևորին պատժենք, ժողովուրդը գրգռելու չէ»։ Վալին կանչելով հայոց առաջնորդը Պսակ ծ. վարդապետը, դերման Շովեն միսիոնարը էյմանը, հայ Ավետարանականաց հովիւը վեր. Վարդան Ամիրխանեանը, ասոնց բոլորին կը հաղորդե իրեն եկած հեռագիրեն պարունակութիւնը պատուիրելով հանդերձ այնքան հրամայական ե իշխանական թոնով մը «եթե ժողովուրդը կուզե որ բանտի մեջ եղող չեզոքները շուտ արձակուած տեսնել, քովերնին եղած ոեէ զենք և ոազմամթերք շուտով մեզի յանձնելու են անկե վերջ հաւանական է, որ բոլորն ալ աղատ արձակենք» ակնարկուած բոլոր կուսակցականներու ազատման հավանականութիւնը կը ցուցնե։

Թուրքին յատուկ փաղաքշական և քաղաքավարական կեղծ յարգանքներուն և խոսքերուն ասոնք սկսան կատարեալ իսաններով քարոզել, որ «զենքերը կառավարութեանը յանձնելու ենք, եթե ոչ մերինները բանտ պիտի մընան»։ Գերման միսիոնարը, որն որ ժողովուրդի վրայ նախապես լաւ ազդեցութիւն մը թողած էր, վարդապետը իրենց եկեղեցիներու մեջ խոսած քարոզներովը կարողացան համոզուեւ և համոզել խեղճ ժողովուրդը թե «փրկութիւնը մեր բանտարկեալ եղբարց զենքերը յանձնելու մեջ կը կայանայ, առանձին-առանձին ժողովներով, այսպես համոզկիր խոսքերով ժողովրդին մեջ այդ հաւատքը ստեղծեցին, թե «խոհեմութիւնը զենքեր յանձնելն է»։

Այս պարագային խորամանկ կառավարութիւնը յաջողեցաւ թշնամութիւն և դժգոհանք սերմանել ժողովրդեան մեջ կուսակցականները ոչ կուսակցականներ և փոխադարձաբար սկսան զիրար խժբժել, մեղադրել, որու յաջորդեց կարգը մը անախորժ դեպքեր։ Քարոզներու արդիւնքը եղաւ զենքերի յանձնումը, մերիններու յիմարաբար խաբուելը, խեղճ, միամիտ առաջնորդը այնքան համոզուած թուրք պաշտօնէից խոսքերուն, որը կսկսի գիւղեր մարդ դրկել, նամակներ գրել, որ ունեցածնին անյապաղ և առանց այլևայլի յանձնեն, միամիտ ժողովուրդը իսկոյն կի համակերպի։ (Ստորագրեալս պաշտոնիս բերումով Կարմիր գիւղը կըզտնէի, երբ Պսակ վարդապետ ինձի ուղղած էր միենոյն իմաստով նամակ մը, որուն հակառակը պատասխանեցի և քիչ մնաց, որ... ես արդեն այդ օրէն փախստական մը եղա և ուր լինելս ոչ ոք գիտեր մեկէ մը ի զատ, որը ուտելիք կը հասցներ ինձի)։ Այս բոլոր գործողութիւնները լաւ ասած խաղերը տեղի ունեցան մայիսի վերջերը և մինչև յունիսի 10-րդ օրը որու ատեն արարուածը կը փոխի։

Զենքերու յանձնելուն անմիջապես յաջորդեց բանտի մեջ եղողներու աքսորումը, որոնց թիւը 1500—1600 կրլիներ և քաղաքի և շրջակայից սոսկալիօրեն պաշարումը. Խարբերդեն-Մեզրէ կես ժամ երեք քառորդ հեռաւորութեամբ տեղը երթևեկութիւն դադրեցաւ։ Դուրսերը տեսնուող ոեէ այր մարդ անխնայ կը ձերբակալին և կը ծեծին, գլուխները, պեխերը և կրօնականաց մօրուքները կը փետին։ Խժդժութիւնները աննկարագրելի են այլևս, տունէ տուն մինչ իսկ երթևեկութիւն անկարելի է, կը լսինք որ բանտարկեալները գիշերները կը քշին։ Պսակ վարդապետը դիմում կը կատարե և վերադարձին վերջնականապես կը ձերբակալուի, 15 անօթի ծարաւ բանտը անցնելեն վերջ... կաքսորուի արդեն ուժասպառ եղած։

Երբ այրերու ձերբակալումները խստութեամբ կը շարունակվեն, շրջակա գիւղերի բնակիչները բոլորովին ջարդուած էին։ Կանանց դիմումները գերման միսիոնարուն մոտ «մեր էրիկներու արյունաթաթախ հագուստները դիտմամբ մեր դուռները կբերին ձգին» խոսքերը միսիոնար էյմանին գութը չի շարժեր։ «Ձեմ հավատար ձեր խոսքերուն, կառավարութիւնը մեզի վստահեցուցած է, թե աքսոր պիտի ըլլա, բայց ոչ ջարդ»։

Յունիսի 15-էն սկսան ընդհանուր ժողովրդեան աքսորումը։ Ինչպես կը ջարդէին, կը կողոպտէին, Մալաթիոյ ճամբան, Եփրատ դետին մեջ, ինչպես դիակները լեցուցին, ինչպես մաքուր ջուրը արեան փոխուած էր տառա-

պանքի այդ շրջանին մեջ, ինչպես հայուն գոյքերը կը խլին քիւրդերը և ինչ եղանակներով կը փախցուին հայ կոյսերը...

Խարբերդի Եփրատ գոլեճի և Աստվածաբանական
ճեմարանի շրջանավարտներեն
Արսեն Խաչիկեան

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 125, թթ. 13—15։ Բնագիր։ Ձեռագիր։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Համիդիե հեծելագնդերը քրդերից կազմված անկանոն դինվորական դնդեր էին՝ ստեղծված սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից՝ 1891 թ. Թուրքիայում՝ հայ ազգային-ազատագրական շարժումները ճնշելու, հայկական ջարդեր կազմակերպելու նպատակով։

2 Թիֆլիսի ազգային բյուրոն ստեղծվել է ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումար-խորհրդակցությունում (1912թ.)։ Նպատակն էր հասնել Հայկական հարցի լուծմանը։ 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին ցարական կառավարության պահանջով Կովկասյան ռազմաճակատի համար կազմակերպել է հայ կամավորական ջոկատներ։ Զբաղվել է նաև արևմտահայ գաղթականների տեղավորման հարցով։ 1917 թ. դադարել է գործելուց։

3 «Ազատամարտ» օրաթերթ, ՀՀԴ օրգան։ Տպագրվել է Կ. Պոլսում 1909—1914, 1918—1924 թթ.։ Արտոնատեր խմբագիրը եղել է Ռուբեն Զարդարյանը։

4 Ս. Դ. Սազոնով (1860—1927 թթ.), ռուս պետական գործիչ, դիվանագետ։ Եղել է արտաքին գործերի նախարար։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին զբաղվել է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցով։

5 Ղորոնցով-Դաշկով Ի. Ի. (1887—1916 թթ.) ռուս պետական գործիչ։ 1905—1915 թթ. եղել է Կովկասի փոխարքա։ Նրա միջնորդությամբ ցարական կառավարությունը ստանձնեց Թուրքիայում հայկական բարենորոգումների անցկացման նախաձեռնությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914 թ. սեպտեմբեր), բանակցելով Ազգային բյուրոյի հետ, ձեռնամուխ է եղել հայկական կամավորական ջոկատների կազմակերպմանը։

6 Ս. Թադեի վանք, հայկական ճարտարապետության հուշարձան, սրբատեղի Իրանի Արտաղ գավառում, Մակու քաղաքից 20 կմ հարավ-արևելք։ Ըստ ավանդության հիմնադրել է Թադևոս առաքյալը՝ 66 թ.։ Հուշարձանը պահպանվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից։